

ՄԻՋՃՅՈՒՂԱՅԻՆ ԲԱՐԲԱՌՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԳԱՅԱՆԵ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Հայերենի մի շարք բարբառներ միջնուղային՝ դիրք են գրավում, այսինքն՝ ունեն երկու տարբեր ճյուղերի բարբառներին բնորոշ հատկանիշներ: Բարբառների միջնուղային դիրքը բխում է հայ բարբառագիտության մեջ ընդունված ձևաբանական դասակարգման սկզբունքից, որի համաձայն ՈՒՄ ճյուղի բարբառների հիմնական առանձնահատկությունն այն է, որ դրանք սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են –աւմ վերջավորութեամբ անկատար դերբայով, Ս ճյուղինը՝ –ս (լիս) վերջավորութեամբ, իսկ Լ ճյուղինը՝ անորոշ դերբայով: Մասնիկավոր կազմութեամբ բարբառների գլխավոր հատկանիշը գորբառյան ներկայի բայաձևերին որևէ եղանակիչ հարադրելն է: Միջնուղային բարբառները, սահմանական եղանակի նշված ժամանակները կազմելիս, կիրառում են տարբեր ճյուղերի ձևաբանական միջոցները:

Միջնուղային տերմինն առաջին անգամ շրջանառության մեջ է դրել Ա. Ղարիբյանը: «Հայ բարբառագիտություն» գրքում նա միջնուղային բարբառների շարքն է դասում Քրիլիսիի բարբառը, որը ներկայի կազմության ժամանակ –աւմ-ով ձևերին ռուգահեռ գործածում է նաև կու մասնիկով հարադրված բայական միավորներ, ինչպես նաև Արեշ–Հավարիկի բարբառը, որն արդեն բայական միևնույն հարացույցում, նույն բայի դեպքում է տարբեր ձևեր կիրառում. 1-ին դեպքում՝ Ս ճյուղի բարբառներին բնորոշ, մնացած դեպքերում՝ ՈՒՄ ճյուղի: Հետագայում Հ. Մուրադյանը «Կաբավաբերդի բարբառը» աշխատանքում, ուսումնասիրելով Մեղրու շրջանի Վահրավար, Գուգեմիս, Կուրիս, Ագարակ գյուղերի խոսվածքները և տալով դրանց Կաբավաբերդի բարբառ ընդհանուր անվանումը, դրանք ևս դնում է միջնուղային բարբառների շարքում: Նշված վայրերի խոսվածքները ա և ե խոնարհման բայերում իրենց ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմում են –լիս, իսկ ի խոնարհման բայերում՝ –աւմ անկատար դերբայով: Ս. Ալավերդյանն իր «Արդվինի բարբառը» թեկնածուական դիսերտացիայում –լիս և կու ձևերի զուգահեռ գործածություն է նշում Արդվինի բարբառում:

Միջնուղային բարբառների գոյությունը պետք է բացատրել նախ՝ տարբեր ճյուղերի բարբառների փոխադրեցություններ, որի հետևանքով ներկայի հին ձևերին զուգահեռ գործածվել են ներկայի նորակազմ ձևերը, և ապա՝ այն փաստով, որ դրանք ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար են ապարեզ նվաճել: Ելնելով ներկայի և անցյալ անկատարի կազմության եղանակից՝ միջնուղային բարբառները կարելի է բաժանել երեք խմբի. ա) դերբայակազմ միջնուղային բարբառներ, բ) դերբայակազմ–մասնիկավոր միջնուղային բարբառներ և գ) գորբարատիպ–մասնիկավոր միջնուղային բարբառներ:

Առաջին խմբի միջնուղային բարբառները ներկայի կազմության ժամանակ կիրառում են դերբայական տարբեր ձևեր՝ կամ Ում և Ս, կամ էլ՝ Լ և Ս ճյուղերին բնորոշ: Դրանք են Կաբավաբերդի, Ագուլիսի, Արեշի բարբառները, Խոյի և Մարաղայի մի շարք խոսվածքներ: Երկրորդ խմբի բարբառները ներկա ժամանակի գաղափարն արտահայտելու համար զուգահեռաբար գործածում են դերբայով և օժանդակ բայով կազմված և կու նա-

1 Միջնուղային տերմինը կիրառվում է՝ նկատի ունենալով ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմության ձևաբանական հատկանիշը:

խամասնիկով հարադրված ձևեր: Այս խմբի մեջ են մտնում Թբիլիսիի, Արդվինի բարբառները և Սասունի Հոսներ գյուղի խոսվածքը: Գրաբարատիկամասնիկավոր միջնուղային բարբառների ներկան բնորոշվում է մասնիկավոր և գրաբարածե կազմությունների զուգահեռ գործածությամբ, որի հիմնական ներկայացուցիչը հոտորչուրի բարբառն է:

Խնչպես նշվեց, դերբայակազմ միջնուղային բարբառներից է Կաբավաբերդի բարբառը: Այն ներկա ժամանակահամաստն արտահայտելու համար օգտագործում է դերբայական երկու ձև՝ լիս և -ում՝ տարբեր լծորդության բայերում, այն է՝ ի լծորդության բայերն ունենում են -ում//ըմ, իսկ ա, ե լծորդության բայերը՝ լիս վերջավորությամբ անկատար դերբայ: Ընդ որում, վերջինս առանց հնչյունափոխության պահանջոված է վահրավարի և Գուդեմնիսի խոսվածքներում, իսկ Կուրիսում և Ագարակում անկատար դերբայն ունի լիս վերջավորություն, որն առաջացել է լիս-ից [>] հնչյունափոխությամբ, օրինակ՝

Վահրավար-Գուդեմնիս

Կուրիս-Ագարակ

խըմում ըմ իրվալիս իմ (երևում եմ)
խըմում ըս իրվալիս իս (երևում ես)
խըմում ա իրվալիս ա (երևում է)
խըմում ըք իրվալիս իք՝ (երևում ենք)
խըմում ըք իրվալիս իք՝ (երևում եք)
խըմում ըն իրվալիս ին (երևում են)²

խըմում ըմ իրվալիս իմ
խըմում ըս իրվալիս իս
խըմում ա իրվալիս ա
խըմում ըք իրվալիս իք՝
խըմում ըք իրվալիս իք՝
խըմում ըն իրվալիս ին³

Ներկայի նման կազմությունը հատուկ է նաև Օրդուբադի շրջանի (նախկին Գողթն գավառ) Ագուլիս, Բիստ, Ցղնա, Փառակա, Իսմիս, Տանակերտ գյուղերին: Նշված վայրերում, սակայն, լիս վերջավորությամբ անկատար դերբայ ունենում են ա լծորդության բայերը, իսկ Ագուլիսում՝ նաև ի լծորդության հետևյալ բայերը՝ խուսիլ, կ՝ առդիլ, հաջիլ, ճընանլիլ, ժըժդիլ, ըմանլիլ, հըվատիլ⁴: Մնացած բայերը ներկան կազմում են -ում և դրանից սերող -ամ, -օմ վերջավորությամբ դերբայներով, այսպես

Օրդուբադի շրջան, գ. Փառակա

Ագուլիս

սէրւմ ըմ մընալիս ըմ
սէրւմ ըս մընալիս ըս
սէրւմ ա մընալիս ա
սէրւմ ըք մընալիս ըք
սէրւմ ըք մընալիս ըք
սէրւմ ըն մընալիս ըն⁵

սայրամ ըմ մընալիս ըմ
սայրամ ըս մընալիս ըս
սայրամ ա մընալիս ա
սայրամ ըք մընալիս ըք
սայրամ ըք մընալիս ըք
սայրամ ըն մընալիս ըն⁶

Այս խմբին պատկանող մյուս բարբառը Արեշինն է: Առաջին անգամ այն միջնուղային բարբառ է համարել Ա. Ղարիբյանը. «Արեշ-Հավարիքի բարբառը մեծ հետաքրքրություն է ներկայացնում նրանով, որ իր սկզբունքային քերականական ձևի՝ ներկայի կազմության մեջ ունի խոշոր նորություն. «նում» ձևովի բոլոր բարբառների խոնարհման մեջ «ում» վերջավորությունը դրվում է բայահիմքի վրա, իսկ Արեշ-Հավարիքի բարբառում ներկայի առաջին դեմքը կազմվում է ընդհանուր լեզվի անկատար դերբայի երկրորդական ձևով և օժանդակ բայով՝ իրելիս ըմ, մյուս բոլոր դեմքերում «ում» դերբայական վերջավորությունը դրվում է անորոշ դերբայի վրա (գ՝ իրելում ըս, գ՝ իրելում ա»⁷: Այսինքն՝ Արեշի բարբառում, ի տարբերություն նախորդնե-

² Հ. Մ ու ր ա դ յ ա ն, Կաբավաբերդի բարբառը, Երևան, 1967, էջ 138:

³ Նույն տեղում, էջ 145:

⁴ Հ. Մ ու ր ա դ յ ա ն, Ագուլիսի բարբառը [Հայերենի բարբառագիտական ատլասի անուիկ նյութեր (այսուհետև՝ ՀՐԱ-ի անտ. նյութ.), տետր 22]:

⁵ Ա. Խ ա չ ա տ ը յ ա ն, Փառակայի խոսվածքը (ՀՐԱ-ի անտ. նյութ., տետր 13):

⁶ Հ. Մ ու ր ա դ յ ա ն, Ագուլիսի բարբառը (ՀՐԱ-ի անտ. նյութ., տետր 22):

⁷ Ա. Ղ ա ռ ի բ յ ա ն, Հայ բարբառագիտություն, Երևան, 1953, էջ 372:

րի, խոնարհման միևնույն հարացույցում, բայական նույն միավորի դեպքում
են գործածվում -ըմ և -լիս վերջավորությամբ դերբայները.

դիրելիւ ըմ
դիրելւ ըս
դիրելւ ի

դիրելւ անբ
դիրելւ ար
դիրելւ ան⁸

Դերբայակազմ խմբի բոլոր բարբառներում բացակայում է կու եղանակիլը: Սրանցում պայմանական եղանակախմաստը դրսևորվում է անորոշ
դերբայի օգնությամբ, օրինակ՝

Արեշ

Ագուլիս

Լախալաբերդ

մընալ ըմ
մընալ ըս
մընալ ի
մընալ անբ
մընալ ար
մընալ ան⁹

մընօլ ըմ
մընօլ ըս
մընօլ ա
մընօլ ըբ
մընօլ ըբ
մընօլ ըն¹⁰

մընալ ըմ
մընալ ըս
մընալ ա
մընալ ըբ
մընալ ըբ
մընալ ըն¹¹

Այս բարբառներում ներկայի պատմական զարգացումը ընթացել է հետևյալ
կերպ. նախապես անորոշ դերբայ և օժանդակ բայ կապակցությունը ցույց է
տվել ինչպես խոսելու պահին կատարվող, այնպես էլ՝ կատարվելիք գործո-
ղություն: Այնուհետև ներկա և ապառնի բայաձևերը միմյանցից տարբերա-
կելու պահանջ է առաջացել: Իբրև հետևանք, որպես ներկան կազմող ժա-
մանակաձևեր, ստեղծվել են -լիս-ով ձևերը, իսկ անորոշ դերբայի և օժան-
դակ բայի հարադրությամբ կազմված միավորները, դառնալով միարժեք,
գործածվել են միայն պայմանականի դեպքում, այսինքն՝ այս բարբառների
բայական համակարգի զարգացումը ընթացել է այնպես, ինչպես Կու ճյու-
ղի այն բարբառներին, որոնք հետագայում վերածվել են Ում կամ Ս ճյու-
ղի: Հետագա ժամանակաընթացքում սրանցում Ում ճյուղի բարբառների ետին
ազդեցությամբ սկսել է գործածվել նաև -ում դերբայով ներկան, այլ կերպ
ասած՝ դերբայակազմ խմբի միջնուղային բարբառներում -լիս-ով ձևերը
նախնական են, իսկ -ում-ովը՝ փոխառություն: Նույնիմաստ ձևերի գործա-
ծությունը հանգեցրել է այն բանին, որ նոր ներկան աստիճանաբար դուրս
է մղել հինը և ձեռք բերել ավելի լայն գործառություն, այսպես՝ Կաքավա-
բերդի բարբառում և Օրդուբադի շրջանի նշված գյուղերի խոսվածքներում
նախնական -լիս-ով ներկան պահպանված է միայն ա լծորդության բայե-
րում, իսկ Արեշում՝ միայն եզակի առաջին դեմքում:

Դերբայակազմ խմբի մեջ են մտնում նաև Լ ճյուղի այն բարբառները, որ-
ոնք օժանդակ բայի նախադաս դիրքում Ս ճյուղի բարբառներին հատուկ -լի
վերջավորությամբ դերբայով են իրենց ներկան կազմում, օրինակ՝

Նախիջևան, գ, Նուրս

Մարաղա

սերել ըմ
սերել ըս
սերել ի
սերել էնբ
սերել էբ
սերել էն

յէս էմ սերելի
ուս էս սերելի
էն ի սերելի
մէնբ, էնբ, սերելի
ուսբ, էբ, սերելի
ընգանբ էն սերելի¹²

սերալ ըմ
սերալ ըս
սերալ ը
սերալ ընբ
սերալ ըբ
սերալ ըն

յիս իմ սերալը
դուն իս սերալը
էն ի սերալը
մէնբ, ինբ սերալը
ուսբ, իբ սերալը
նանբ, ին սերալը¹³

8 Նույն տեղում, էջ 375:

9 Ա. Լուսինյ, Արեշի բարբառը, Երևան, 1982, էջ 107:

10 Հ. Մուրադյան, Ագուլիսի բարբառը (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 22):

11 Հ. Մուրադյան, Կաքավաբերդի բարբառը, էջ 147:

12 Լ. Բաբայան, Նուրս (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 144):

13 Ա. Վանյան, Մարաղայի բարբառը (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 227):

Այս բարբառների ներկայի հարացույցում երկու ձևերի միաժամանակյա գործածությունը բացատրվում է ներկան —լիս դերբայով կազմող բարբառների ազդեցությամբ, որի հետևանքով —լիս-ով ձևերը համաբանության օրենքով սկսել են կիրառվել և ճյուղի բարբառներում, քանի որ վերջիններս այսօր ավելի շատ են ու տարածված, իսկ անորոշ դերբայով միավորները, որպես նախնական ձևեր, աստիճանաբար անհետանում են:

Նոր Զուղայի բարբառը ևս այս խմբին է պատկանում: Այն ներկա ժամանակահամաստը դրսևորելու համար —ում վերջավորությամբ անկատար դերբային զուգահեռ կիրառում է նաև —ման հնչյունակապակցությամբ վերջավորվող դերբայը, որի գործածության միակ ոլորտն այս բարբառն է: Ման դերբայական ձևը, ինչպես —ում և —լիս դերբայները, առաջացել է ներգոյական հոլովից, այս դեպքում՝ —ումն վերջածանց ունեցող բայական: Ներկայի այս —ման ձևը ծագած է գրաբարի —ումն գոյականաձև դերբայների ներգոյական ձևից. այսպէս՝ շարժումն, սեռ.—տր. շարժման, ներգ. ի շարժման, որից էլ ի շարժման եմ, այն է՝ «շարժուելու գործողութեան մէջ, շարժումի մէջ եմ, շարժուում եմ» կամ նախդրի անկումով՝ շարժման ամ»¹⁴, —գրում է Հ. Աճառյանը:

Նոր Զուղայի բարբառում —ում անկատար դերբայի օգնությամբ կազմվում է ներգործական սեռի բայերի ներկան, օրինակ՝ «...որ խալխի ջահէլներին մի խէտ խելքից խանում ան: Յես էլ միշտ էդ՝ ամ առում: Ախլիկ Յանանուկ, դ՛ուռն քակում ան, մին տես ո՞վ ա: Քա քուրիկ Խօռօմսիմի, խընդրում ամ էլ մի՛ խարցնել: ...ցէրէկ չուր յարակու ինձ դո՞ր ան յեփում տապալում, իմ խող (թն խանում)»¹⁵: —Ման վերջավորությամբ դերբայով ձևավորվում է կրավորական, չեզոք և կրավորակերպ չեզոք բայերի ներկան: Աստիցն յիդգանն օր փստրկուց «բեգամում ան էն կողմարէնքն, էլ խէտնէրն խօսել չի խլման: ...յեփ էլ օր բ՛ (ցնջէլ ա՝ ծծաղման ա ու ինձ խէտ բումբիբես ա գ՛ ոլ: ...հայ ճոճուման ու բոճուման ան: էս էլ ապրե՞լ ա մեր ապրելն. ախկադից էլ վատ անճ ապրման մենք. ինչ լանք գ՛ (խնէրանուս)»¹⁶: Այսպիսով, Նոր Զուղայի բարբառում ներկա ժամանակի պատկերը հետևյալն է.

սիրում ամ	սիրում անք	ապրման ամ	ապրման անք
սիրում աս	սիրում էք	ապրման աս	ապրման էք
սիրում ա	սիրում ան	ապրման ա	ապրման ան ¹⁷ :

Հր. Աճառյանի կարծիքով —ման դերբայական վերջածանցը ավելի շատ տարածված է եղել հին Զուղայի բարբառում, իսկ Նոր Զուղայում այն աստիճանաբար դուրս է մղվել. «Ներկայի կազմութեան այս անկանոնութիւնները, յատկապէս ներգործականի ու կրաւորականի շփոթութիւնը պատճառ են դարձել, որ ման ձևի ներկային, որի գործածութիւնը շատ աւելի պարզ էր: Զուղայի հին բարբառում —ման ձևով ներկան շատ աւելի տարածուած էր, և այսօր էլ Հնդկաստանի հայերը առատօրէն գործածում են իրենց խօսակցական լեզուում»¹⁸, ապա՝ «Այսօր Նոր-Զուղայի արդի բարբառում —ման ձևի ներկան իր կենսատնկութիւնը կորցրած՝ գրեթէ ամէն տեղ փոխանակուած է —ում ձևով և պահուած է միայն գալ, լալ, աալ, կալ միավանկ բայերի ծայրը, կազմելով այսպէս մի տեսակ համադրութիւն Երևանի բարբառի միավանկ բայերի —լիս ներկայի հետ»¹⁹: Իրոք, հին Զուղայի բարբառով բերված նմուշներում —ման-ով անկատարի ոչ մի օրինակ չի հանդիպում²⁰: Սը-

14 Հր. Աճառյան, Քննություն Նոր-Զուղայի բարբառի, Երևան, 1940, էջ 255—256:

15 Նույն տեղում, էջ 314, 315, 324, 327, 333:

16 Նույն տեղում, էջ 315, 325, 326, 328:

17 Նույն տեղում, էջ 256:

18 Նույն տեղում, էջ 254:

19 Նույն տեղում, էջ 255:

20 Նույն տեղում, էջ 391—401:

րանցում ներկայի կազմության համար գործածվում է միայն -ում վերջավորությանը անկատար դերբայը, այսպես՝ «...էթալուց գ'ալուց տկլորում եմ մեզ ամմա ձ' էդընէրիցըս ի՞նչ ա գ'ալում: ...մէ գոլ ունեն, շատ ջ' ուր տաւում. առէլը կապած աւ Այ մարթ, յես քեզ ասում եմ ի՞նչ ես ք' երի, ո' ու ասում ես թէ յես լավ կերեր եմ: Իրա հընգէրնէրից մէկը գ'ալում ա, հանում ա»²¹, Իսկ նոր Զուղայի բարբառով բերված նյութերում -ման վերջավորությանը դերբայը առատ գործածություն ունի. «էդ' պատճառի Զուղէն էլ ան մոռաման, խէրն ու մէրն էլ ու փսակվին էլ, էլ նա մենձ ու փստիկն ա յիմացման, նա հարուստն ու բիշարէն (աղբատ): ...յուրիշ տէրտէրնէր թէմի ան գ'նում, փողատէր ան դ'աւուման, խօջաման ան (հարստանում), տուն ու տնեղէն, բաղ ու բաղաթ (այգիներ) ան առման, կնանքոնց վոսկակուլու ան անում, խիզանին էլ զառում զարդ' արում ան, դ' առ իվլի փողէրն էլ բէնքն (դրամատուն) ան գ'նում, քանի էլ սաղ ան՝ յերջ'անիկ ապրման ան»²², ներկայի հարացույցում -ման մասնիկով դերբայական միավոր չի արձանագրված նաև ՀՔԱ-ի ծրագրով լրացված «Հին Զուղա» աշխատանքում.

խըմըմ ըմ	խըմըմ ընք
խըմըմ ըս	խըմըմ էք
խըմըմ ա	խըմըմ ընՅ

Հեղինակը՝ Դ. Կոստանդյանը, ներածական մասում լրացուցիչ նշում է. «Բարբառախոսը ներկայի կազմության մեջ երբեք չի վկայել -ման-ով ձև»²⁴: Նոր Զուղայի բարբառում -ման ձևը պահպանվել է, որովհետև այն առանձնացած է անկախ է եղել և, քնականաբար, չի կրել հարևան բարբառների ազդեցությունը²⁵: Մինչդեռ հին Զուղան, որի բնակիչները բազմիցս գաղթել և որոշ ժամանակ անց նորից վերահաստատվել են հին վայրում, ենթարկվել է շրջակա բարբառների ուժեղ ազդեցությանը, որի հետևանքով -ման դերբայական միավորը գործածությունից դուրս է եկել²⁶:

Միջնյուղային բարբառների հաջորդ խումբը դերբայական-մասնիկավորն է: Այս խմբին են պատկանում Արդվինի, Թբիլիսիի բարբառները և Սասունի Հոսսեր գյուղի խոսվածքը: Թբիլիսիի բարբառը, ինչպես ասվեց, առաջին անգամ միջնյուղային բարբառների շարքն է դասել Ա. Ղարիբյանը՝ նա, ուսումնասիրելով Սայաթ-Նովայի և Սունդուկյանի ստեղծագործությունների լեզուն, նկատել է, որ Թբիլիսիի բարբառում ներկա ժամանակի գաղափարն արտահայտելու համար -ում վերջավորություն ունեցող անկատար դերբային զուգահեռ գործածվում են կու մասնիկով կազմված ձևերը, ընդ որում. «Օրինակները այնքան շատ են, որ կարելի է նույնիսկ ասել, թե «կու» մասնիկով կազմված ներկան շատ ավելի հաճախ է գործածվում, քան անկատար դերբայով, ուստի ամենայն իրավամբ Թբիլիսիի բարբառը կարելի է գետեղել նաև «կը» ճյուղի մեջ, այդ պատճառով մենք այն կոչում ենք միջնյուղային բարբառ»²⁷: Իրոք, Սայաթ-Նովայի բանաստեղծություններում -ում-ով ներկայի կողքին կան կու մասնիկով կազմված ներկայի բազմաթիվ օրինակներ.

Դովլաթն էլթիբար շունէ, եփ օր կ'էրթայ իր շքբարով...
Գուգիմ թըռչի բլբուլի պէս—բաղէրումէն բէզարիլ իմ:

21 Նույն տեղում, էջ 392, 393, 396, 399.

22 Նույն տեղում, էջ 314, 320, 323.

23 Դ. Կոստանդյան, Հին Զուղա (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 174).

24 Նույն տեղում:

25 Տե՛ս նաև Հ. Ա. ճ ա ո յ ա ն, նշվ. աշխ., էջ 28.

26 Նույն տեղում, էջ 31.

27 Ա. Ղ ա ռ ի բ յ ա ն, նշվ. աշխ., էջ 264.

էրէսըդ տէսնէլու գու քան քաղաք քաղկօվ, գիդ գիդի պէս.
Մէննօղըն քիդմէն կու առնէ անմահական դիդ դիդի պէս.
Եփ տիդէմէդ ժաժ իս գալի, շրխշրխկում իս ջիդ ջիդի պէս.
Ի՞նչ կօնիս սանթուր, քամանչէն, դուքսըդ՝ շօնգուր շանգ իս անում:

Մօղըդ նըստօղըն կու հարփի՝ դուն բանգ ու բօզա իս, ազիզ.
Դիվանա-փահլու կու շինիս, տէսնօղին՝ ջազա իս, ազիզ²⁸:

Նույնը չի կարելի ասել Գ. Սունդուկյանի լեզվի մասին, որտեղ գերա-
կշռողը —ու-ով ձևն է։ Ա. Ղարիբյանը այս երևույթը բացատրում է XIX դա-
րի առաջին կեսին «Ում» ճյուղի ուժեղ լեզվական ազդեցությամբ²⁹:

Թբիլիսիի բարբառի բայական համակարգում երկու նույնիմաստ ձևերի
դուգահեռ գործածությունը է նախնական կու-ով ներկայի պահպան-
ման։ Այստեղ էլ, ինչպես մյուս բարբառներում, կատարվել է նույն տեղա-
շարժը. երբ ներկա և ապառնի քերականական իմաստների ձևաբանական
տարբերակման պահանջով ներկայի համար ստեղծվել է արտահայտման նոր
ձև՝ —ում անկատար դերբայով և օժանդակ բայով հարադրված, կու-ով ձևերը
գործածվել են պայմանականի եղանակաիմաստը դրսևորելու համար։ Սա-
կայն Թբիլիսիի բարբառում ներկայի համար նոր ձևերի ստեղծումից հետո
էլ շարունակվել են ներկայի իմաստով կիրառվել նաև կու-ով միավորները,
բայց ավելի սակավ գործածությամբ։ Սա հաստատվում է նաև այն փաս-
տով, որ այս բարբառում ապառնի ժամանակը ձևավորվում է կու եղանակի-
չի օգնությամբ.

կու գրրիմ	կու գրրինք
կու գրրի	կու գրրիք
կու գրրէ	կու գրրին ³⁰

Եվ քանի որ Գ. Սունդուկյանը ժամանակագրական առումով հաջորդել է Սա-
յաթ-Նովային, այդ պատճառով էլ աստիճանաբար գործածությունից դուրս
նկող կու մասնիկով հարադրված բայական միավորները նրա մոտ ավելի
քիչ են հանդիպում:

Այս տիպի մեջ մտնող հաջորդ միջնուղային բարբառը Արդվինինն է, որի
համառոտ նկարագրությունը առաջին անգամ տվել է Հր. Աճառյանը՝ այն
հատկացնելով Ն ճյուղին։ 1939 թ. Ա. Ղարիբյանը Ն ճյուղը բաժանելով Լ և Ս
ճյուղերի՝ Արդվինի բարբառը հատկացրել է Ս ճյուղին։ Այս բարբառի ամ-
բողջական նկարագիրը տվել է Ս. Ալավերդյանը իր «Արդվինի բարբառը»
թեկնածուական դիսերտացիայում, որտեղ նա առաջին անգամ Արդվինի ներ-
կայի հարացույցում արձանագրում է կու մասնիկով կազմված ձևերի առ-
կայությունը, նշելով, որ կան շուրջ երեք տասնյակ բայեր, որոնց ներկան
կազմվում է կու մասնիկով և գրաբարյան ներկայի ձևերով, ինչպես՝

կու գրրիմ	կու գրրինք
կու գրրիս	կու գրրիք
կու գրրի	կու գրրին ³¹ :

Արդվինի բարբառը ներկա ժամանակաիմաստի դրսևորման համար — լիս
վերջավորությամբ դերբայով կազմված միավորներին զուգահեռ գործածում է
նաև կու-ով ձևեր՝ սահմանափակ թվով բայերում։ Կու եղանակիչը, ինչ-
պես Թբիլիսիի բարբառում, այստեղ էլ սկզբնական կու-ով ներկայի պահ-
պանման արդյունք է:

²⁸ «Սայաթ-Նովա», Թբիլիս, 1914, էջ 70, 71, 80:

²⁹ Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 265:

³⁰ Նույն տեղում, էջ 276:

³¹ Ս. Ալավերդյան, Արդվինի բարբառը (թեկնածուական դիսերտացիա), Երևան, 1970:

Սասունի շրջանի Հոսնեի գյուղում ներկան բնորոշվում է նախամասնիկավոր և դերբայակազմ ձևերի զուգահեռ գործածությամբ: Սասունի բարբառը Կը ճյուղին է պատկանում, իսկ նրա այս խոսվածքը միջին դիրք է գրավում Կը և Լ ճյուղերի բարբառների միջև, այսինքն՝ ներկայի հարացուցում կիրառում է Կը և Լ ճյուղերի բարբառներին հատուկ կազմություններ.

գըսիր ըմ	գըսիրինք	սիրիլ ըմ	սիրիլ իք
գըսիրըս	գըսիրիք	սիրիլ իս	սիրիլ իք
գըսիրը	գըսիրին	սիրիլ ը	սիրիլ ին ³²

Այստեղ էլ, ինչպես Արդվինում և Թբիլիսիում, երկու նույնիմաստ ձևերի գործածությունը հին ներկայի պահպանման հետևանք է: Սակայն այս խոսվածքում ներկայի նախնական ձևերն արդեն անորոշ դերբայով կազմված միավորներն են, իսկ մասնիկավոր կազմությամբ ներկան շրջակա Կը ճյուղի բարբառներին հետագա ազդեցությամբ է առաջացել:

Խոտորչուրի բարբառը գրաբարատիպ-մասնիկավոր խմբի ներկայացուցիչն է: Հր. Աճառյանը «Հայոց լեզվի պատմության» մեջ նշում է. «Այս բարբառի գլխավոր հատկությունն այն է, որ աշխարհաբարին հատուկ սահմանական ներկայի կազմության ոչ մի եղանակ չգիտե և պահում է գրաբարի ձևը մինչև այժմ անփոփոխ: Այսպես՝ «տանիմ, տանիս, «տանում եմ, տանում ես», նստին «նստում են», պառկի «պառկում է» ևն: Միայն ձայնավորով սկսվող բայերը ստանում են Կ մասնիկը (կասին, կելնեն, կիջնեն), միավանկ բայերը ստանում են Կու (կուգան, կուտա): Երբեմն էլ բաղաձայնով սկսվող բայերը ստանում են կը կամ կու, որ կարող է նաև հետադաս լինել. ինչ. կը մնան, կու գայթի, նեղվորի կու»³³: Հետագայում Ա. Ղարիբյանը այս բարբառը դրել է գրաբարաձև ճյուղում, որի միակ ներկայացուցիչն է այն: Նա ևս նշում է ձայնավորով սկսվող և միավանկ բայերի մասնիկավոր կազմությունը, դա համարելով Կը ճյուղի բարբառների ազդեցություն³⁴:

ՀԲԱ-ի ծրագրով լրացված «Խոտորչուրի բարբառ» աշխատանքում Դ. Կոստանդյանը անում է հետևյալ դիտողությունը. «Գրավոր աղբյուրները հիշատակում են նաև նախադաս կու՝ բոլոր տիպի բայերի համար»³⁵: Իրոք, Խոտորչուրի բարբառով գրված հեքիաթներում մասնիկավոր կազմությամբ օժտված են նաև բաղաձայնասկիզբ բայերը. «էման որ իրենք մէջն կը մնան բոփի պէս. մէ պիծի ծակըմ կը մնա դուս ելնելու: Լալան մէկ ուզում բերայ, լամ կու ճութկեն, բեռն արծաթ կը բառնան ու քաղքին մէջ լուր կենան թէ՛ նոր կերթայ: Գրէ Թղթի վրայ ու կառնուլ կերթայ սարայն, պատն կու զարնու գիշերայն: Մեր ծերեյն պատմին թէ՛ վախտին ժամանակին թագաւորն էրազմ կը տեսնու: Միանկ մէ աղէմ տասնուօխտ տարեկան, ժամէն կուգայ տունն, ոչ կու խմայ, ոչ ալ կու խօսայ»³⁶: Ինչպես երևում է. օրինակներից, գրաբարաձև բայերն ուղեկցվում են մասնիկավոր կազմությամբ բաղաձայնասկիզբ բայերի առատ գործածությամբ: Այսինքն՝ ներկայի կազմության ժամանակ մասնիկավոր ձևերին զուգահեռ գործածվում է նաև գրաբարյան ներկան: Ներկայի հարացուցումը երկու տարբեր ձևերի գործածությամբ էլ հենց Խոտորչուրի բարբառը միջճյուղային դիրք է գրավում, կիրառելով Կը և գրաբարակերպ ճյուղի բարբառներին հատուկ կազմություններ: Այս առումով Խոտորչուրի բարբառը եզակի չէ: Նման երևույթ արձանագրվել է նաև այլ վայրերում:

Մոկսի, Շատախի, Սպարկերտի, Գավաշի, Հայոց ձորի խոսվածքները նկարագրելիս Մ. Աբեղյանը ներկա և անցյալ անկատարի կազմության մա-

³² Ա. Խաչատրյան, Սասունի շրջան, գյուղ Հոսնե (ՀԲԱ-ի անտ. նյութ., տետր 121):

³³ Հր. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, հ. 2, Երևան, 1951, էջ 337—338.

³⁴ Տճ՝ Ա. Ղարիբյան, նշվ. աշխ., էջ 175.

³⁵ Դ. Կոստանդյան, Խոտորչուր, Միջին թաղ (ՀԲԱ-ի անտ. նյութ., տետր 59):

³⁶ Զ. Հաճեան, Հին ավանդական հեքիաթներ Խոտորչուր, Վիեննա, 1907, էջ 5, 10, 11, 19, 81.

սին գրում է. «Սահմանական ներկան (որ և ապառնի է) և անցյալ անկատարի կազմվում են «կը» մասնիկով, բայց պատահում են առանց «կը» մասնիկի գործածություններ, ինչպես միջին հայերենում է, որի հետևանքով միևնույն ձևը, օրինակ՝ «բերեր», «բերեն» նշանակում է ա) բերում էր, բերում են. բ) բերեր, բերեն. գ) կը բերեր, կը բերեն»³⁷, ՀՔԱ-ի ծրագրով լրացված նյութերում ևս նշվում է մասնիկավոր ձևերին զուգահեռ գրաբարյան ներկայի առկայությունը։ Ա. Հանեյանը Բիթլիսի նահանգի Զխուրի շրջանի Քըխսամ գյուղի և Խութի Թաղվու գյուղի խոսվածքները գրանցելիս բերում է այս փաստը հաստատող օրինակներ՝ «Քու շուն կապե՛ս Արշակ։ Մատնըքի ակ պրսպըղա»³⁸, Տօրագ կախիճ սընից»³⁹։

Գրաբարյան ձևերի կիրառությունն ակատվում է նաև անցյալ անկատարի կազմություններում։ Թումանյանի շրջանի Շնող, Հաղբատ, Ստեփանավանի Վարդաբլուր, Շամշադինի շրջանի Նավուր գյուղերում անցյալ անկատար ժամանակի գաղափարը զուգահեռաբար արտահայտվում է գերբայական և գլրաբարատրայ կազմություններով, ինչպես՝

Շամշադին, գ. Նավուր

խօսըմ ի	խօսի
խօսըմ իր	խօսիր
խօսըմ էր	խօսէր
խօսըմ ինք	խօսինք
խօսըմ իք	խօսիք
խօսըմ ին	խօսին ⁴⁰

Ստեփանավան, գ. Վարդաբլուր

կառթըմ ի	կառթայի
կառթըմ իր	կառթայիր
կառթըմ էր	կառթար
կառթըմ ինք	կառթայինք
կառթըմ իք	կառթայիք
կառթըմ ին	կառթային ⁴¹

Հիշյալ վայրերում, սակայն, միայն անցյալ անկատարի կազմության ժամանակ են գործառվում տարբեր ճյուղերի ձևաբանական միջոցները, տվյալ դեպքում՝ գրաբարատրայ և դերբայական ճյուղերի։ Ուստի այդ վայրերի խոսվածքները կարելի է անվանել գրաբարատրայ-դերբայական թերի միջնուղային բարրառներ։ Իսկ Թումանյանի շրջանի Շամուտ, Նոյեմբերյանի լճկաձոր, Շավարշավան, Շամշադինի Վերին Կարմիր աղբյուր, Ալավերդու Սանահին, Վարցական ՍՍՀ Մառնեոլի շրջանի Խոժոռնի գյուղերում կիրառվում է միայն գրաբարածե անկատար, այն չի ուղեկցվում դերբայական և անկատարի զուգահեռ գործածությամբ, օրինակ՝

Նոյեմբերյան, գ. լճկաձոր

խօսէի	խօսէինք
խօսէիր	խօսէիք
խօսէր	խօսէին ⁴²

Թումանյան, գ. Շամուտ

խօսէի	խօսէինք
խօսէիր	խօսէիք
խօսէր	խօսէին ⁴³

Հարկ է նշել, որ զուտ գրաբարատրայ անկատար հանդիպել է միայն դերբայական բարրառներում։ Նմանատիպ իրողություն առ այսօր չի նկատվել ներկա ժամանակի կազմություններում։

Այսպիսով, հայերենի մի խումբ բարրառների միջնուղային դիրքը բերվում է հայ բարբառագիտության մեջ ընդունված ձևաբանական դասակարգման սկզբունքից, այլ կերպ ասած՝ ձևաբանական այն հիմնական հատկանիշը, որով այս բարբառները միջնուղային արժեք են ստանում, սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակների կազմությունն է։

37 «Սասնա ծռեր», հ. Ա, Երևան, 1936, էջ 28։

38 Ա. Հանեյան, Բիթլիսի նահանգ, գ. Քըխսամ (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 1184)։

39 Ա. Հանեյան, Խութի Թաղվու գյուղ (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 182)։

40 Ա. Խաչատրյան, Շամշադին, գ. Նավուր (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 175)։

41 Ն. Վարդանյան, Ստեփանավան, գ. Վարդաբլուր (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 176)։

42 Ա. Ասատրյան, Նոյեմբերյան, գ. լճկաձոր (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 230)։

43 Ա. Շախկյան, Թումանյան, գ. Շամուտ (ՀՔԱ-ի անտ. նյութ., տետր 137)։

Սրանք, ինչպես ասվել է, ներկա և անցյալ անկատար ժամանակների հարացուցում համատեղում են տարբեր ճյուղերի ձևարանական միջոցները՝ մի դեպքում՝ Ում և Ս, ի և Ս, մի այլ դեպքում՝ Ում և Կը, կամ էլ Կը և Ս: Միջ-
ճյուղային բարբառների այս հատկությունը տարբեր ճյուղերի բարբառների
փոխազդեցության հետևանք է:

МЕЖВЕТВЕННЫЕ ДИАЛЕКТЫ В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

ԴԱՅՆՔ ԴԵՎՈՐԴՅԱՆ

Р е з ю м е

Согласно принятому в армянской диалектологии принципу морфологической классификации, некоторые диалекты занимают межветвенную позицию, то есть для образования изъявительного наклонения настоящего времени и прошедшего несовершенного применяют морфологические средства разных ветвей, в одном случае—«Ում» и «Ս», «Է» и «Ս», в другом—«Ում» и «Կը», «Կը» и «Ս». Межветвенные диалекты можно разделить на три группы, образованные: а) причастием; б) причастием и частицей; в) настоящим временем древнеармянского языка и частицей. Существование межветвенных диалектов объясняется взаимодействием разных ветвей диалектов, в результате которого параллельно со старыми формами употреблялись также невоссозданные формы настоящего времени.